740 Թափառում էր իմ հոգին

1. Թափառում էր իմ հոգին
Մեղքի խավարում կրկին,
Տո՛ւր մեղքերիս, Տե՛ր, թողություն,
Երկնից կուզեմ արքայություն:
Ձեռքս բռնի՛ր՝ վայր չընկնեմ,
Մոլորված, կորած մեկն եմ,
Ողորմի՛ր Տեր, Դու ինձ ների՛ր: (2)

Քո սուրբ ձեռքերի մեջ պահի՛ր,
Մեղքի խավարից ինձ հանի՛ր:
Տկար եմ ես հիմա հոգով,
Քեզ եմ դիմում ես աղոթքով,
Քեզ եմ խնդրում ես հավատքով,
Իմ Տե՛ր Հիսուս:
Ների՛ր:

2. Ինձ համար ես, Տե՛ր, խաչվել,
Գիտեմ՝ շատ ես Դու տանջվել:
Կորած գառդ եմ ես մոլոր,
Ների՛ր մեղքերը իմ բոլոր:
Բայց հոգնել եմ ես արդեն
Մեղքի աշխարհում ապրել,
Ողորմի՛ր, Տե՛ր, Դու ինձ ների՛ր: (2)